

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Սայաթ – Նովա համայնքում 2013թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ կատարված
և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

11.12.2013թ.-ին տեղի ունեցավ ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքի հանրային լսումներ, որին մասնակցում էին գյուղապետարանի աշխատակիցները, ավագանու անդամները, դպրոցի տնօրենը և աշխատողները, համայնքի բնակիչները և ՀՀ Արարատի մարզի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության աշխատակիցները:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հանրությանը 2013թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ բյուջեի եկամուտների մասին՝

Տարվա պլան – 41846900 ՀՀ դրամ, որից 5340000 ՀՀ դրամ ֆոնդային բյուջե

Փաստացի հավաքագրված 39.030.039 ,որից հողի հարկի գումարը,5.034,185 դրամ պլանի համեմատ կազմում է 98.3%, գույքահարկ փոխադրամիջոցներից 2,201,456 դրամ 146.7%,գույքահարկ իրավաբանական անձանցից շինության համար 538,900 դրամ 102%,ֆիզ անձանց համար 291, 506 դրամ 145.7%, տեղական տուրքերի մասով 562, 000 դրամ 103.2%,հողի վարձակալության մասով 625,500 դրամ 102.5%, շինության վարձակալության մասով 241,200 36.4%: Հողի օտարումից մուսաբեր 4,479,674 ՀՀ դրամ,ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար 501,500 ՀՀ դրամ:

Ծախսերի մասին ղեկավարը ներկայացրեց հետևյալը՝

Տարվա պլան – 41846900 ՀՀ դրամ, որից 5340000 ՀՀ դրամ ֆոնդային բյուջե

Փաստացի ծախս – 33037743 ՀՀ դրամ, որից 4962907 ՀՀ դրամը ֆոնդային բյուջեից:

Կատարվել է աղբահանում- 1313811 ՀՀ դրամ, կազմակերպվել է միջոցառումներ-820000 ՀՀ դրամ, Մասիսի երաժշտական դպրոցին, գյուղից երաժշտական դպրոց հաճախող երեխաների համար փոխանցվել է – 59280 ՀՀ դրամ:

Ուսման վարձ/այլ նպաստ/ փոխանցվել է թվով 10 ուսանողների համար-500000 ՀՀ դրամ, տրվել է մահվան նպաստ 22 ընտանիքների – 770000 ՀՀ դրամ նաև տրվել է դրամական օգնություն թվով 51 անապահով, զոհված ազատամարտիկների թվով 8, վիրավոր ազատամարտիկների թվով 4 և պատերազմի մասնակից վետերանների ընտանիքներին – 2120000 ՀՀ դրամ:

Ձեռք է բերվել թվով երկու համակարգիչներ /կոմպլեկտ/ և երկու տպիչ սարք – 968000 ՀՀ դրամ, փողոցների կոպճապատման համար ծախսվել է – 1750000 ՀՀ դրամ:

Փոխանցվել է անապահով ընտանիքների երեխաների համար դասագրքերի գումար, դասագրքերի շրջանառու ֆոնդին – 200000 ՀՀ դրամ:

Տրվել է անապահով ընտանիքներին բուժման նպաստ – 180000 ՀՀ դրամ, սպորտային նպաստ սպորտամենների համար – 200000 ՀՀ դրամ:

Շահույթ չհետապնդող կազմակերպություններին նվիրատվություն – 285000 ՀՀ դրամ, նվիրատվություն միջնակարգ դպրոցին ճաշարանի դահլիճի վերանորոգման համար – 1300000 ՀՀ դրամ:

Մինչև տարեվերջ նախատեսվում է տալ 160000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով զոհված ընտանիքների, վիրավոր ազատամարտիկների և վետերաններին և 180000 ՀՀ դրամ ամառորի կապակցությամբ միջոցառմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ռ.Ա.ԼԱՎԵՐԴՅԱՆ